ՅԱՒԵԼՈՒԱԾ
ԾԻԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ
ՀԱՆԴԻՍԻՆ
ԹԻՒ 6· 1866 ՅՈՒՆԻՍ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԱՌ ԱԶԳՆ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ԹՈՒՐՔԻԱ, ՌՈՒՍԻԱ, ՊԱՐՍԿԱՍՏԱՆ, ՀՆԴԿԱՍՏԱՆ, ՑԵԳԻՊՏՈՍ, ԵՒԱՅԼՆ

1859 թուին, երբ Օրթագիւղի քարոզիչ Մատթէոս Ա.քեպիսկոպոսն Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուած դեռ Պոլիս կը գտնուէր, Պրուսայու առաջնորդ Գէորգ եպիսկոպոսն էլ Պոլսոյ Պատրիարք կարդուած լինելով, Հայոց Հոգեւոր և Գերագոյն ժողովոց համաձայնութեամբ մի ԽՆԴԻՐ ԵՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ է վաւերացնում և ստորագրում, և Լորու Մէլիքեանց Ռուսաց կառավարութեան պաշտօնաւորի ձեռքով Սուրբ Էջմիածնի Ռուսահայոց Սինոդին է ղրկում և նրամէն այդ Խնդրին և Առաջարկութեան գործադրութիւնն է պահանջում Ցաճկաստանի եկեղեցականաց և ժողովրդականաց կողմէն.

Այդ Խնդիրն ու Առաջարկութիւնն Արագածունի Ղուկաս եպիսկոպոսն Սրբոյն Էջմիածնի տեղակալն ու Սինոդի առաջին անդամն, Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւատալ-

եաց, վարդապետութեան, սահմանադրութեան նախնի արարողութեանց և աւանդութեանց հակառակ տրամադրուած գտնելով, յայտնում է նրա անգործադրելի լինելը Մատթէոս Կաթողիկոսին. յետոյ Ռուսիոյ Հայոց ժողովրդականք էլ բողոքում են Խնդրին և Առաջարկութեան դէմ և յայտնում են իրանց անհամաձայնութիւնը, որով անգործադրելի է լինում այն.

Այս Խնդիրն ու Առաջարկութիւնը դրուած տարածուում է Հայոց ազգին մէջ իր դատապարտութիւնն էլ միասին. 1861 թուին փարիզ անուն լրագրին մէջ Հնդկահայոց կողմէն հրատարակւում և բոլոր Հայոց ազգին ծանօթ է լինում. 1866 թուին մեր Ծիրն Աւարայրի Ապրիլ ամսաթուին մէջ նորէն հրատարակւում է քննութիւնն ու դատապարտութիւնն էլ միասին.

Արդ մենք՝ համարելով թէ այդ Խնդիրն ու Առաջարկութիւնը վաւերացնող ու ստորագրող Արքեպիսկոպոսը արդէն ծանօթ է Հայոց թէ եկեղեցականաց և թէ ժողովրդականաց, ապահով էինք, որ Պոլսոյ Վիճակային ժողովն ու Ընդհանուր ժողովն էլ իրանց աչքին առջեւ կունենան Կաթողիկոսի ընտրութեան ժամանակ այդ իրողութիւնը, Գէորգ Պատրիարքի ձեռքով կատարուած. Բայց ընդդէմ մեր ակնկալութեան, Պոլսոյ Վիճակային եկեղեցականաց ժողովը փոխանակ ըստ հրահանգին Ցեղեկագրի կաթողիկոսական Յանձնաժողովոյն բարձրաստիճան եկեղեցականաց մէջէն արժանաւորը զատելու կամ ջոկելու ընտրելացու կաթողիկոսութեան, քուէարկութեամբ առաւելագոյն ձայն է տալի նոյն այն Խնդիր և Առաջարկութիւնն ստորագրող և վաւերացնող և դրեթէ բոլոր Հայոց ազգէն դատապարտուած և ամբաստանութեան տակն ընկած Եպիսկոպոսին և եօթն ընտրելացուների մէջ դնելով՝ ներկայացնում է ազգային Ընդհանուր ժողովոյն.

Պոլսոյ ընդհանուր ժողովն կամ անհասկացողութեամբ կամ վիճակային ժողովոյն վրայ ունեցած վստահութեամբը, կամ թէ այդ խնդիր և Առաջարկութեան նշանակութիւն չտալով և կամ թէ նրա վաւերացնողին և ստորագրողին արքեպիսկոպոսական կերպարանքն յարգելով, երբեւ ընտրելացու կաթողիկոսութեան ընդունում է և քուէ տալի նրա ընտրութեան առաջին անդամ 44, երկրորդ անդամ 45 ընդդէմ 29 քուէի։

Այս կերպով Պոլսոյ Հայոց եկեղեցականաց և ժողովրդականաց մի մասը հաւանութիւն է տալի Գէորգ եպիսկոպոսին ձեռին յանձնել Հայաստանեայց Եկեղեցւոյ ծայրագոյն կաթողիկոսութիւնը, և մի մասն ոչ, որն որ փոքրագոյնն է։

Այսպէս է Գէորգ եպիսկոպոսին ընտրութեան արտաքին կերպարանքը, տեսնենք թէ ներքինն ի՞նչպէս է։

Ա. Ռուսաց կառավարութեան Թուրքիոյ Հայոց ժողովրդին տուած ահն ու սարսափը իր հաստատած Սինոդի ձեռքով և Պոլսումն ունեցած գործակատարների բերնով թէ շուտով կաթողիկոսի ընտրութիւնը կատարուի և ընտրելի անձն իր ուզածն լինի, ինչպէս արդէն այլեւայլ նամակներէ և հրատարակութիւններէ յայտնի է։

Բ. Նոյն իսկ ինքը Գէորգ եպիսկոպոսը խնդրած է առանձին իր հոգեւոր հայր սրբազան Պօղոս Պատրիարքէն, ասելով թէ, «Հոգեւոր հայր, գիտեմ դու ինքդ չես կամենալ Ամենայն Հայոց Կաթողիկոս լինել, գոնէ ինձ համար աշխատիր»։ Ուստի Պօղոս Պատրիարքի այս մասին լռութիւն պահելն և հրաժարելն ընտրելի լինելուց թէ՛ վիճակային և թէ՛ ընդհանուր ժողովների մէջ, նշանակում է հաւանութիւն տալ Գէորգին ընտրել տալու Ամենայն Հայոց Կաթողիկոս։

Գ. Նոյն Գէորգ եպիսկոպոսին գրեթէ ամեն երեսփո-

խանաց առանձին թղթեր գրելով կամ թէ կենդանի բերնով, լուռումունջ խնդրելն որ իրան մտքէ չհանեն քուէարկութեան ժամանակ. այս նամակներէն այս և այն անձանց մօտ կը գտնուին ինչպէս և մեր մօտ։

Դ. Այն եկեղեցականք և ժողովրդականք որ 1859 թուին ստորագրել էին այն խնդիրն և Առաջարկութիւնը թէ՛ վիճակային և թէ՛ ընդհանուր ժողովների մէջ երեսփոխան գտնուելով, ապահով ենք, որ Գէորգի համար տուին իրանց քուէն։

Ե. Երեսփոխանաց մի մասին անգիտութիւնը թէ որոնց համար պէտք է տան իրենց քուէն, թէ Գէորգն դատապարտուած է թէ ոչ, և թէ առհասարակ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան նշանակութիւնն ի՞նչ է։

Այս մեր հինգերորդ և վերջին ասածը հաստատելու համար, ահա՛ մի քանի օրինակներ։

1. Երեսփոխանաց մին իր քուէն Անդրէաս եպիսկոպոսին է տալի, առանց գիտենալու թէ նա և ոչ ընտրելացու է։

2. Մի երեսփոխան Եսայի և Գէորգ արքեպիսկոպոսներին երկուսն էլ մի փայտէ մարմին համարելով, որոնք կառքի ական տակ կոտրուած և երկուսի բաժանուած են, ասում է, ոչ միոյն և ոչ միւսոյն քուէ է տալի։

3. Նախընթաց Ընդհանուր ժողովոյն քուէ չտուող երեսփոխանք Գէորգի համար, երկրորդ անգամուն նրա համար քուէ են տալի և ուրիշներին էլ տալ են տալի, Աղաբէգեան Մարկոսին հակառակ գործելու համար։

4. Մի երեսփոխան ոչ Եսայի և ոչ Գէորգին է ճանաչում, և երկուսն էլ մի խմբէ համարելով, նրանց անունները մի թղթի վրայ է գրում, աչքերը խփում և որն որ ձեռին է ընկնում այն թուղթն քուէտուփին մէջ է ձգում։

5. Մի քանի երեսփոխան էլ Ռուսաց կառավարութեան

հաճելի բան անելու համար իրանց ճիգն են թափում Գէ-
որգի համար քուէ տալու և ուրիշներին էլ տալ տալու։

6. Երեսփոխանայմէ ոմանք էլ Եսային իր տեղէն չշար-
ժենք, որպէս զի նորէն դժուարութիւնք չծագին նրա
տեղ ուրիշն ընտրելու, ասելով, Գէորգի համար քուէ են
տալի։

7. Ոմանք էլ՝ և այս շատ հասարակն է, Ամենայն Հա-
յոց Կաթողիկոսութեան բուն նշանակութիւնը չգիտենա-
լով՝ և թէ ո՞ր եկեղեցականն արժանի է այդ իշխանութիւ-
նը վարելու, Գէորգի համար քուէ են տալի։

8. Ամենէն գլխաւորը, այդ Գէորգ եպիսկոպոսն ժա-
մանակով մի քանի նշանաւոր մարդիկ Բարձրագոյն դրան
իբրեւ անհաւատարիմ մատնած լինելով, և մեր ամենուն
յայտնի՝ ամբարտաւանութեամբն անտանելի անձն լինելով,
թող գնայ Էջմիածին մեզմէ հեռու ի՞նչ կուզէ անէ ասե-
լով՝ քուէ են տուել։

Դեռ մի քանի հանգամանքներ էլ կան Գէորգի քուէ
ստանալուն համար, որոնք այս տեղ յիշելն աւելորդ կը
համարինք։

Արդ՝ Թուրքիոյ Հայոց ձայնն առաւելագոյն լինելով
Ռուսիոյ Հայոց ձայնի վրայ, տարակոյս չկայ որ Գէորգ Ե-
պիսկոպոսն՝ Ռուսաց կառավարութեան հաստատած Սինո-
դի ձայներն էլ և նրա տնօրէնութեամբ ընտրուած պատ-
գամաւորների ձայներն էլ պիտի վաստակի մի միայն նրա
համար, որ Գէորգ եպիսկոպոսը Ռուսաց կառավարու-
թեան ուզած ու փնտրուած մարդն է Ամենայն Հայոց
Կաթողիկոս լինելու։

Կը նշանակէ որ այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսն է
Պրուսայու առաջնորդ Գէորգ եպիսկոպոսն, որ իր Պոլսոյ
Պատրիարք եղած ժամանակն այդ խնդիրն ու Առաջար-
կութիւնը, Հոգեւոր և Գերագոյն ժողովներուն հաւանել

տուել է և իր անունով ու կնքով ստորագրել ու վաւերացուցել է։

Ուստի Դէորդ Եպիսկոպոսն իր այդ գործողութեամբն ակներեւ ցոյց կը տայ և կը հաստատէ։

Ա. Իր անհաւատարիմ լինելը Հայաստանեայց Եկեղեցւոյն և Հայոց ազգին։

Բ. Իր գիտութիւն չունենալը Հայաստանեայց Եկեղեցւոյն ոչ հաւատալիքին, ոչ վարդապետութեան, ոչ սահմանադրութեան և ոչ նրա պատմութեան և աւանդութեան մէջ։

Գ. Ամենեւին չճանաչելն ու չգիտենալն թէ այսօր Հայաստանեայց Եկեղեցին և նրա ժողովուրդն Հայոց ազգն, թէ՛ Ռուսիա, թէ՛ Թուրքիա և թէ՛ ուրիշ երկիրներումը լինչ վիճակի մէջ կը գտնուին, որն է նրանց ազգային և բարոյական կեանքն ու կարողութիւնը, և թէ այդպիսի Խընրին և Առաջարկութեան հաստատած եկեղեցական ժողովն ու նրա տուած վճիռները կարող են Հայաստանեայց Եկեղեցւոյն և նրա ժողովրդին ազգային և բարոյական լուսաւորութեան կենդանութիւն և զարգացումն տալ և նրա հոգեւոր ամբողջութիւնն ու աղատութիւնը պահպանել։

Արդ՝ կը բողոքենք, այդ անձի ընտրութեան դէմ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ծայրագոյն պաշտօն վարելու։

Կը բողոքենք Արագածունի Ղուկաս Եպիսկոպոսի ոսկերներովն, որ չթողեց Մատթէոսին այդ բանի գործադրութիւնն անել։

Կը բողոքենք, բոլոր այն Ռուսահայոց կողմէն, որոնք այդ խնդիրն ու Առաջարկութիւնը քննեցին ու դատապարտեցին և զգուշացուցին Մատթէոս Կաթողիկոսին և Էջմիածնի Միաբանութեան այդպիսի ձեռնարկութիւն անելուց։

Կը բողոքենք, այն Հնդկահայոց կողմէն, որ 1861 թուին երանց անբաւականութիւնն յայտնեցին փարիզ անուն լրագրի մէջ հրատարակել տալով այն խնդիրն իր քննութեամբը։

Կը բողոքենք, Պոլսոյ Ընդհանուր ժողովոյն 29 երեսփոխանաց և նրանց ընտրող ժողովրդի կողմէն, որոնք իրանց չկամեցողութիւնն յայտնեցին Գէորգի մասին Եսայեայ համար քուէ տալով։

Կը բողոքենք վերջապէս, Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբութեան և աղատութեան համար բոլոր հայրապետանների, մարտիրոսների և նահատակների թափած արիւնով և քրտինքովը ընդդէմ այդ անձի ընտրութեան։

Կը բողոքենք, ասում ենք չեշտելով, Հայոց ազգի ապագայ սերունդի կողմէն, այդ՝ Հայոց ազգի հասարակաց կարծիքով ամբաստանուած ու դատապարտուած անձի Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուելուն դէմ, և չենք ուզել որ այն խնդիրն ու Առաջարկութիւնն ստորագրող և վաւերացնող Գէորգ Պատրիարքն Պոլսոյ, Ամենայն Հայոց Կաթողիկոս լինի։

Մենք այս մասին օգոստոսի 5 ին Պոլսոյ Սրբազան Պատրիարքին մեր ազդարարութիւն գրեցինք, յայտնելով իրան մեր բողոք բառնալու դիտաւորութիւնը և ճանաչելով իրան Թուրքիոյ Հայոց Եկեղեցւոյն ծայրագոյն Իշխան և իր պատասխանատու լինելն այս ընտրողութեան մասին, խընդրեցինք, մեր առ Սրբազան Պատրիարքն ուղղուած թղթումն իր ուշադրութիւնն դարձուցել այս ամենանուրբ խնդրին վրայ, ահա վեց օր է այսօր բացի լռութենէ ոչինչ պատասխան չստացանք, ուստի պարտաւորեցանք մենք այս իրողութիւնը հրապարակով յայտառնել ամբողջ Հայոց ազգին։

Արդ, այս յայտարարութեանս պատասխանատուութիւնը մեր անձի վրայ առնելով Հայոց ազգի և իր Հոգեւոր Իշխանութեան առջև։

Կըստորագրենք առաջի Աստուծոյ և Հայոց ազգին մեր միտքն անվրդով, մեր խիղճն խաղաղ առանց որ և է կրքի, կամ շահու կամ դրդման, այլ մի միայն Հայաստանեայց Եկեղեցւոյ և Հայոց ազգի ազգային և բարոյական կենդանութեան համար,

Որու եմ ամենախոնարհ ղաւակը

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆ

Կ. Պոլիս. 1866 Օգոստոս 10.

Կ. ՊՕԼԻՍ, ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԵՆԻ Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ